# ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՎԵՐ

## 1-ին փուլ

«ԱյԴի Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13,

**Հրավերի նկարագիր՝** «ավտոմատացված ձայնային օգնական» ծրագրային ապահովում մատակարարող կազմակերպությունները հրավիրվում են նախաորակավորման՝ Բանկի Կոնտակտային կենտրոնի համար «ավտոմատացված ձայնային օգնական» ծրագրային ապահովման ձեռք բերման գործընթացներում ներգրավելու համար:

Սույն հրավերով սահմանված պայմաններին բավարարող մասնակիցները կընդգրկվեն «ԱյԴի Բանկ» ՓԲԸ նախաորակավորված մասնակիցների ցանկում և սույն հրավերի հրապարակման պահից մեկ տարվա ընթացքում ուղղակիորեն կկարողանան մասնակցել Բանկի Կոնտակտային կենտրոնի համար «ավտոմատացված ձայնային օգնական» ծրագրային ապահովման ձեռք բերման ծրագրերի շրջանակներում կազմակերպվող մրցույթներին:

Նախաորակավորման փուլում կընդգրկվեն բոլոր այն մասնակիցները, որոնք կներկայացնեն սույն հրավերի շրջանակներում պահանջվող բոլոր փաստաթղթերը և կբավարարեն սահմանված չափանիշներին:

Հետաքրքրված մասնակիցներից պահանջվում է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը և նշված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ փաստաթղթային հիմնավորումները՝

## Նախաորակավորման չափանիշներ և պահանջներ

- առնվազն 3 տարվա փորձ տվյալ ոլորտում, խոշոր ընկերություններում կատարված աշխատանքների ցանկ, բանկային/ֆինանսական ոլորտում կատարված աշխատանքները կարող են դիտարկվել որպես առավելություն:

- մեկ օրացուցային տարվա ընթացքում 100 000 000 ( հարյուր միլիոն) ՀՀ դրամ և ավել արժեցող նախագծերի իրականացում, կատարված աշխատանքների հիմքեր:
- Հարկային պարտավորությունների առկայության կամ բացակայության մասին տեղեկատվություն, որը չի կարող տրամադրման պահից մեկ ամսից ավել վաղեմություն ունենալ:
- Եթե հանդիսանում է ներկրող՝ նշել ապրանքանիշը
- Ընթացիկ սպասարկման և աշխատակիցների որակավորման վերաբերյալ տեղեկատվություն

**Նախաորակավորում կարող են ստանալ** մասնակից այն իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, որոնք և որոնց սեփականատերերը կամ բաժնետերերը.

- ներգրավված չեն կամ ներգրավված չեն եղել սնանկության վարույթում կամ չեն հանդիսացել սնանկության վարությում ընդգրկված իրավաբանական անձի սեփականատեր կամ բաժնետեր,
- չունեն չկատարված պարտավորություն որի գծով առկա է դատական գործ կամ հարկադիր կատարման վարույթ,
- վերջին երեք տարիներին չեն ունեցել չկատարված պարտավորություն որոնց գծով առկա է եղել դատական գործ կամ հարկադիր կատարման վարույթ,
- նրանց վերաբերյալ առկա չի եղել հարուցված քրեական գործ կամ հարուցված քրեական գործը չի ավարտվել արդարացնող ակտով:

- **Փաստաթղթերի ներկայացման կարգ՝**

Փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով բացառապես procurement@idbank.am էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով՝ նշելով «ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ Ավտոմատացված ձայնային օգնական»:

Հարցերի դեպքում դիմել Դավիթ Լազարյանին՝ հեռ. +37491403235,

Ներկայացման լեզու՝ հայերեն, ռուսերեն

Ժամկետ՝ 15/06/2025թ.:

2-րդ փուլ

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ նախաորակավորումը ստացած կազմակերպություններին, անհատ ձեռներեցներին կամ ֆիզիկական անձանց՝ ԱյԴի Բանկ ՓԲԸ կողմից տարվա ընթացքում կուղարկվեն համապատասխան հիմքեր, աշխատանքների կատարման վայր և տեխնիկական բնութագիր ներառող հարցումներ՝ գնային առաջարկ ներկայացնելու համար:

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ պարունակող փաստաթղթերը ներկայացվում են ծրարավորված, որը պետք է լինի սոսնձված և կնքված այն ներկայացնողի կողմից: Ծրարը և Մասնակցի կազմած փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն կազմակերպության ղեկավարի կամ վերջինիս լիազորված անձի կողմից:

Առաջարկվող գինը ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի պետք է ներառի փոխադրման (Բանկի գլխամասային գրասենյակ), ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը:

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐԸ Ներկայացնել բացառապես Սոնյա Ղևոնդյանին (կոնտակտային տվյալներ՝ հեռ +37493040808)